

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 1

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2015 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ուսումնական ծանրաբեռնվածությունների վիճակը ֆակուլտետում և ամբիոնային խնդիրներ:
2. Տեղեկատվություն հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոնների կողմից կազմակերպվող «Աբեղյանական ընթերցումներ» գիտական նստաշրջանի վերաբերյալ:
3. Դասացուցակի հաստատում:
4. Սոցիալական գործունեության քննարկում:
5. Աշխատանքային կարգապահության հարցեր:
6. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա, ողջունելով և նոր ուսումնական տարվա սկսվելու առիթով բարեմաղթություններ հայտնելով գիտխորհրդի անդամներին, ավելացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 26-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 2015-16 թթ. ուստարվա անդրանիկ նիստի օրակարգը:

Մինչ բուն օրակարգին անցնելը պրոֆ. Ա. Ավագյանը բոլոր ամբիոնի վարիչներին հանձնարարեց շտապ ներկայացնել դեռ ամիսներ առաջ մշակված գիտաուսումնական նոր ծրագրերն ու դասընթացները՝ ուսումնական գործընթացը նպատակասլաց սկսելու և անցկացնելու համար:

**1-ին հարցի** առիթով արտահայտվեցին պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Ն. Հարությունյանը, դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Ա. Ջրբաշյանը և Ս. Գրիգորյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ուսումնական ծանրաբեռնվածությունների վիճակն ամբիոններում և ընդհանրապես ֆակուլտետում գոհացուցիչ է. դրանք ամբիոնների կողմից առաջարկվել ու ռեկտորատի կողմից հաստատվել են ճիշտ ժամանակին, և ամբիոններում փոփոխություններ չկան:

Նշվեց նաև, որ նոր ուսումնական տարվա նախաշեմին ամբիոններն առանձնակի խնդիրներ առայժմ չունեն:

**2-րդ հարցի՝** հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոնների կողմից կազմակերպվող «Արեղյանական ընթերցումներ» գիտական նստաշրջանի վերաբերյալ տեղեկատվությամբ ելույթ ունեցան համապատասխան ամբիոնների վարիչները՝ պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանն ու Ա. Աբաջյանը:

Մասնավորապես նշվեց, որ մեծանուն հայագետ Մանուկ Արեղյանին նվիրված գիտական նստաշրջանի կազմակերպման աշխատանքներն ընթանում են ջանադրությամբ. գիտական և ուսումնական զանազան հաստատություններից արդեն ստացվել են զեկուցումների 34 հայտեր, որոնք, անշուշտ, կքննարկվեն, և կընտրվեն լավագույնները: Կազմակերպիչների խոսքով՝ միջոցառումն ավելի կենդանի դարձնելու նպատակով կլավեն նաև ուշագրավ հուշեր, մասնավորապես ուշարժան կլինեն հայագետի թոռնուհու՝ Հասմիկ Արեղյանի հիշողությունները:

Մանուկ Արեղյանին նվիրված գիտական նստաշրջանը նախատեսված է անցկացնել հոկտեմբերի 4-ին և 5-ին ընդհանուր դահլիճում, այլ ոչ թե սեկցիաներում:

Ստաբերի փոխանակման ընթացքում հնչեց մի կարևոր դիտողություն. պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանն ու Ալ. Մակարյանը պնդեցին զեկուցումներ հանձնարարել նաև գրականագետներին. չէ՞ որ անչափելի է Մ. Արեղյանի ներդրումը նաև գրականագիտության ասպարեզում, և բնավ պատահական չէ, որ ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը կրում է հենց նրա անունը: Գիտական նստաշրջանի կազմակերպիչները սիրով ընդունեցին հնչած դիտողությունը և խոստացան հատուկ զեկուցումներ հատկացնել՝ նվիրված Մ. Արեղյանի՝ գրականության բնագավառում ունեցած բացառիկ ներդրումներին:

Գիտխորհուրդն այնուհետև անդրադարձավ օրակարգի **3-րդ հարցին** և հաստատեց 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի դասացուցակը, որը ներկայացրեց դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Վերջինս տեղեկացրեց, որ արդեն ստեղծվել է նաև էլեկտրոնային դասացուցակ, ուր, ի դեպ, առանձին-առանձին նշված են սեմինարների

անցկացման օրերն ու ժամերը, որպեսզի դրանք չանտեսվեն և ընթանան ըստ գրաֆիկի:

Օրակարգի **4-րդ հարցի՝** սոցիալաբանության արդյունքների քննարկման ժամանակ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ավագյանը նկատեց, որ քանի որ նախորդ նիստում արդեն քննարկվել ու մեկ առ մեկ ընթերցվել են այդ արդյունքները, և ամբիոնների վարիչներին հանձնարարվել են համապատասխան միջոցներ ձեռնարկել պրոֆեսորադասախոսական աշխատանքների բարելավման ուղղությամբ, ուստի այժմ անհրաժեշտ է համարում քննարկել ուսանողների անանուն գրությունները: Ուսանողները հիմնականում դժգոհում են արատավոր հետևյալ երևույթներից՝ որոշ դասախոսներ խոչընդոտում են ուսանողի ինքնարտահայտումը, ուշանում են դասերից, երբեմն լսարան են մտնում ցածրորակ գիտելիքներով, ծանրաբեռնվածությամբ հաստատված գործնական պարապմունքներ գրեթե չեն անցկացնում, չափազանց սակավ են հոգեբանական զրույցները, աղքատիկ է ֆակուլտետում գործող գրադարան-ընթերցասրահը, 1-ին հարկի հսկիչ անձնակազմն անտարբեր է մասնաշենքի ելուստին, որի հետևանքով միջանցքներում հաճախ նյարդայնացնող աղմուկ է և այլն: Դեկանի խոսքով՝ սրանք երևույթներ են, որոնք պատիվ չեն բերում ֆակուլտետին, և անհրաժեշտ է ձեռնարկել շտապ միջոցներ՝ վերոնշյալները վերացնելու համար:

Օրակարգի **5-րդ հարցը** նվիրված էր աշխատանքային կարգապահությունը: Ծավալվեցին աշխույժ քննարկումներ, և արդյունքում որոշվեց լինել ավելի զգոն ու առաջիկայում վերստին անդրադառնալ կարգապահական հարցերին:

**Ընթացիկ հարցերում** քննարկվեցին.

ա/ ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոց. Աշխեն Էդվարդի Ջրբաշյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության հարցը:

Ելույթ ունեցողները՝ պրոֆ. պրոֆ. Ժ. Քալանթարյանը, Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ռ. Էլոյանը, նշեցին, որ Ա. Ջրբաշյանը բավարարում է ՀՀ ԲՈՀ-ի՝ թեկնածուական ատենախոսության ղեկավարման համար ներկայացվող պահանջները. լինելով գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ՝ նա հեղինակ է ավելի քան երեք տասնյակ գիտական հոդվածների, գրքերի, որոնք վերաբերում են գրականության տեսության տարաբնույթ հարցերի: Շատ կարևոր է, որ նա մշտապես զբաղվում է գիտական աշխատանքով, տպագրում ուշագրավ հոդվածներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, ք. գ. թ., դոց. Աշխեն Էդվարդի Ջրբաշյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվության հարցով դիմել ՀՀ ԲՈՀ-ին:

բ/ ԵՊՀ հայ գրականության ամբիոնի առկա ասպիրանտ Գրիգոր Կարապետի Շաշիկյանի մասնագիտական թվանիշը փոխելու և թեկնածուական ատենախոսության թեմայի հարցերը:

Արտահայտվողները՝ պրոֆ. պրոֆ. Ժ. Քալանթարյանը, Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը և Ալ. Մակարյանը, նշեցին, որ Գ. Շաշիկյանը ընդունվել է հայ գրականության ամբիոնի առկա ասպիրանտ, սակայն նրա հետաքրքրությունների շրջանակը վերաբերում է գերազանցապես գրականության տեսությանը և համաշխարհային գրականությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. ԵՊՀ հայ գրականության ամբիոնի առկա ասպիրանտ Գրիգոր Կարապետի Շաշիկյանի՝ «Հայ դասական գրականություն» (Ժ 01.01) մասնագիտական թվանիշը փոխել «Գրականության տեսություն» (Ժ 01.04):

2. Գրիգոր Կարապետի Շաշիկյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Նարատիվի ձևավորման նոր միտումները 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակույթում»՝ Ժ 01.04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ:

գ/ ԵՊՀ հայ գրականության ամբիոնի առկա ասպիրանտ Սաթենիկ Հարությունի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Արտահայտվողները՝ պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Գաբրիելյանը, Վ. Սաֆարյանը, Ժ. Քալանթարյանը և Ալ. Մակարյանը, նշեցին, որ արևմտահայ փոքր արձակը հատկապես երգիծանքի տեսանկյունից խիստ կարոտ է լրջմիտ ուսումնասիրության, ուստի այն նպատակահարմար համարվեց առաջադրել որպես Ս. Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմա:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. ԵՊՀ հայ գրականության ամբիոնի առկա ասպիրանտ Սաթենիկ Հարությունի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Երգիծանքը արևմտահայ փոքր արձակույթում»՝ Ժ 01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Արշավիրի Մակարյանին:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, նրանց մաղթեց քաջառողջություն և հաջողություններ նոր ուսումնական տարում:

Նիստը հայտարարվեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**